ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«29» «սեպտեմբերի» 2025 թվական № 376-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-Ի №107-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 7-րդ և 20-րդ ենթակետերով և հիմք ընդունելով շրջակա միջավայրի նախարարի 2025 թվականի մայիսի 22-ի N 193-Ա հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի մարտի 24-ի «Շրջակա միջավայրի նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու մասին» N 107-Լ հրամանով հաստատված հավելված 3-ի 5-րդ կետի 11-րդ ենթակետը շարադրել հետևյալ բովանդակությամբ նոր խմբագրությամբ. «միջազգային բազմակողմ և երկկողմ պայմանագրերից ու համաձայնագրերից բխող Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքի վերաբերյալ, ըստ անհրաժեշտության, համապատասխան մարմիններից ստացված տեղեկատվության և հաշվետվությունների հիման վրա կազմում է ամփոփագրեր, ներկայացնում է համապատասխան պետական մարմիններին»:

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

9/29/2025

X

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Երևան